Subject **Fwd: Fwd[3]: ՀԻՇԵՑՈՒՄ | Մնաց 2 օր**

From Զարգացման ծրագրերի բաժին <marzkotayqzargacum@gmail.com>

To <info@hrazdan.am>, <info@charentsavan.am>, Ճաղկաձորի համայնքապետարան / Tsaghkadzor Municipality <meria@tsakhkadzor.am>, Lernanist Hamaynq <lernanist1828@mail.ru>, <meghradzor@mail.ru>, <solakgyuxapetaran@mail.ru>, jrarat guxapetaran <jraratgyuxapetaran@mail.ru>, Rafayel Grigoryan <qaxsi.kotayk@mail.ru>, Բյուրեղավան Համայնքապետարան <byureghavan@mail.ru>, <akunq.hamaynq@gmail.com> 70 more...

Date 2021-10-19 12:14

Հարգելի՛ գործընկերներ,

Հիշեցնում ենք, որ «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մինչ 80% համաֆինանսավորմամբ իրականացվող առցանց (online) դասընթացների գրանցումը մոտենում է ավարտին:

Խնդրում ենք տարածել հայտարարությունը հետաքրքրված անձանց շրջանակներում, որպեսզի վերջիններս բաց չթողնեն այս հնարավորությունը՝ սովորելու մինչ 80% զեղչով:
Մնաց 2 օր:

Կից ներկայացնում ենք դասընթացների մանրամասներն ու գրանցման պայմանները.

«Տվյալագիտության (Data Science/ Analytics)»՝
https://edu.hti.am/trainings/datascience-analytics [1]

«ՏՏ վաճառքներ (IT Sales)»
https://edu.hti.am/trainings/it-sales [2]

Լրացուցիչ հարցերի կամ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (095) 574778 հեռախոսահամարին:

Շնորհակալություն:

Հարգանքով՝
«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն

Մ-1098
20 10 2021

Links:
---
[1] https://edu.hti.am/trainings/datascience-analytics
[2] https://edu.hti.am/trainings/it-sales

--

Հարգելի գործընկեր,

Սիրով տեղեկացնում ենք Ձեզ, որ **<u>ս.թ. հոկտեմբերի 25-ին և 26-ին Աղվերանում (վայրը հաստատվում է)</u>** տեղի կունենա **«Շենքերի՝ համայնքային էներգետիկ կառավարում, էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգ, Զափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում» խորագրով երկօրյա դասընթացը**, որը կազմակերպվել է Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՀՏ) կողմից:

Դասընթացը կվարի Կայուն էներգետիկայի գծով միջազգային փորձագետ **պրն. Մատիյա Վաժդիչը**, ով կներկայացնի ոլորտում առկա լավագույն միջազգային փորձը:

Կարևորելով Ձեր կազմակերպության դերը էներգաարդյունավետության խթանման գործում՝ խնդրում եմ առաջադրել **էներգետիկ կառավարման ոլորտին առնչվող աշխատակցի թեկնածություն՝** մասնակցելու վերոնշյալ դասընթացին:

Մասնակցությունը հնարավոր է ինչպես անձամբ, այնպես էլ հեռավար/առցանց տարբերակով:
Անձամբ մասնակցել ցանկացողներին խնդրում ենք միջոցառումից 1-2 օր առաջ տրամադրել ՔՈՎԻԴ-19 դեմ պատվաստման վկայականը կամ ՊՈՇ բացասական թեստը՝ առկայության դեպքում: Համավարակի կանխարգելման միջոցները հաշվի են առնված:
Մասնակիցներին խնդրվում է հնարավորության դեպքում ունենալ նաև <u>նոթբուք</u>՝ գործնական հանձնարարությունները կատարելու համար:
Մասնակիցների տեղափոխումը Երևանից Աղվերան և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև սնունդն ու գիշերակացը հյուրանոցում (1 գիշեր) կհոգան կազմակերպիչները:

Առցանց մասնակցությունը հնարավոր է հետևյալ հղմամբ՝
Join Zoom Meeting: https://undp.zoom.us/j/81316143166
Meeting ID: 813 1614 3166

Երկու դեպքում էլ ապահովվելու է անգլերեն-հայերեն համաժամանակյա թարգմանություն:

Միջոցառման օրակարգը կցվում է:

Կազմակերպական հարցերի պատշաճ ապահովման համար խնդրում եմ հաստատել Ձեր մասնակցությունը՝ նամակ հղելով gohar.harutyunyan@undp.org էլ. փոստին և զանգահարելով (+374) 44 410 012 հեռախոսահամարին **<u>մինչև ս.թ. հոկտեմբերի 21-ը, ժամը 18.00-ը</u>**:

Հարգանքով՝
Գոհար

Գոհար Հարությունյան

Ծրագրի օգնական

Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն
ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում
ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Կառավարության տուն #3, գրասենյակ #549
Հանրապետության հրապարակ, Երևան, ՀՀ
Հեռ.՝ (+374 10) 583 932, 583 920 (ներքին 22)
Բջջ.՝ (+374 44) 410 012
Կայք՝ www.mersheng.am

think before you ink

ՇԵՆՔԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ՉԱՓՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ (ՉՀՀ) ԹԵՄԱՅՈՎ

ԴԱՍԸՆԹԱՑ

Ամսաթիվ՝ *25-26 հոկտեմբերի, 2021*
Վայրը՝ *Աղվերան (ենթակա է հաստատման)*
Կազմակերպիչներ՝ *Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ) և Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ)*

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերապատրաստման ընթացքում իրականացվելիք սեմինարներն անդրադառնում են շենքերում էներգաարդյունավետության բարձր չափորոշիչներին: Վերապատրաստումը ներառում է վեց նիստ, որոնք ներկայացված են ստորև՝

- Նիստ 1 – Էներգետիկ կառավարման (ԷԿ) և շենքերի ոլորտում չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ներածություն,
- Նիստ 2 – Էներգետիկ կառավարման և չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ինստիտուցիոնալ, կազմակերպական և իրավական հայեցակերպերը գլոբալ և ԵՄ մակարդակներում,
- Նիստ 3 – Համայնքային էներգետիկ կառավարումը որպես չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ազգային համակարգի մաս,
- Նիստ 4 – Էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգը և էներգետիկ կառավարման համակարգի գործիքների օրինակներ
- Նիստ 5 – Շենքերում էներգետիկ աուդիտների ընթացակարգը և բազմաչափանիշային վերլուծությունը
- Նիստ 6 – Շենքերում էներգաարդյունավետության միջոցառումների համար ֆինանսավորման հնարավորությունների իրացման լավագույն աշխատակարգերը

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերապատրաստման սույն սեմինարի ավարտին մասնակիցները ձեռք բերած կլինեն գիտելիքներ և փորձագիտական կարողություններ շենքերում էներգաարյունավետության բարձր չափորոշիչների մասին և կունենան հետևյալ կարողունակությունները՝

- Հասկանալ էներգետիկ կառավարումը և չափողականությունը, հաշվետայնությունը և հավաստագրումը շենքերի ոլորտում,
- Գլոբալ և ԵՄ մակարդակներում Էներգետիկ կառավարման և չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ինստիտուցիոնալ, կազմակերպչական և իրավական հայեցակերպերը հասկանալու կարողունակություն,

- Համայնքային էներգետիկ կառավարումը որպես չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՁՀՀ) ազգային համակարգի մաս կազմակերպելու մասին գիտելիք,
- Գոյություն ունեցող էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգի օգտագործման կամ այսպիսի համակարգի մշակումների կազմակերպման մասին գիտելիք,
- Հասկանալ էներգետիկ աուդիտի գործընթացը և վստահորեն օգտագործել բազմաչափանիշ վերլուծության գործիքները,
- Շենքերում էներգաարդյունավետության միջոցառումների համար ֆինանսավորման հնարավորությունները հասկանալու և դրանցից օգտվելու կարողություն:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վերապատրաստման սեմինարի ընթացքում կկիրառվեն սասավանդման՝ ստորև բերված մեթոդները՝

- Լսարանային դասախոսություններ (կամ առցանց՝ կախված COVID-19-ով պայմանավորված սահմանափակումների իրավիճակից),
- Լսարանային հաշվարկման վարժություններ՝ կիրառելով հաշվարկման գործիքները:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Վերապատրաստման սեմինարն ընդհանուր առմամբ կտևի 2 աշխատանքային օր, որի մանրամասն ժամանակացույցը բացատրվում է այստեղ

ՕՐԱԿԱՐԳ

Օր 1՝ Երկուշաբթի, 25 հոկտեմբերի 2021թ՝

Ժամ	Դասախոսություն	Բովանդակություն
09.00 ՈՒՂԻՂ	**Հավաքը՝ Հանրապետության հրապարակում**	**Տեղափոխում Աղվերան**
10:00 – 10:30	**Գրանցում և ողջույնի սուրճ**	
10:30 – 10:45	**Ընդունող կողմի հետ ծանոթություն: Վերապատրաստման սեմինարի ներկայացում:**	Ողջույնի խոսք ՄԱԿ ԵՏՀ-ից (պ՝ Օլեգ Զյուբինսկի) Շենքերի ոլորտում ՉՀՀ-ի ստեղծում ՄԱԶԾ-ԿԿՀ «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցման ծրագրի» շրջանակներում (պ՝ Տիգրան Սեկոյան)
10:45 – 11:30	**ՆԻՍ 1 Էներգետիկ կառավարման (ԷԿ) և շենքերի ոլորտում չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ներածություն**	- Հիմնական եզրերի սահմանում - Շենքերի ոլորտում համայնքային էներգետիկ կառավարման և ՉՀՀ-ի կարգավորումների հիմնարար շրջանակը (գլոբալ և ԵՄ մակարդակում) - ԵՄ փորձը - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
11:30 – 12:15	**ՆԻՍ 2 Էներգետիկ կառավարման և չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ինստիտուցիոնալ, կազմակերպչական և իրավական հայեցակերպերը գլոբալ և ԵՄ մակարդակներում**	- Իրավական հայեցակերպերը և գլոբալ/ԵՄ փորձը - Շենքերի ոլորտում էներգետիկ կառավարման և ՉՀՀ-ի ինստուցիոնալ և կազմակերպական կառուցվածքը - Էներգետիկ կառավարման ազգային և համայնքային համակարգի կազմակերպումը - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
12:15 – 12:30	**Սուրճի ընդմիջում**	
12:30 – 13:15	**ՆԻՍ 2 – շարունակություն**	- Չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) հիմնական սկզբունքները - Էներգիախնայողությունների շարունակական մշտադիտարկումը - ՉՀՀ ՏՀՏ գործիքները - ՉՀՀ-ի կազմակերպումը համայնքային/ազգային մակարդակում - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)

13:15 – 14:00	**ՆԻUS 3 Համայնքային էներգետիկ կառավարումը որպես չափողականության, հաշվետայնության և հավաստագրման (ՉՀՀ) ազգային համակարգի մաս**	- Էնեգրայի համայնքային սպառումը (էներգիայի արտադրությունից մինչև էներգիայի սպառում – շենքեր, տրանսպորտ, լուսավորություն, հանրային վայրեր) - Համայնքային էներգետիկ կառավարման կազմակերպական միավորները (աշխատանքի ծավալները) - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
14:00 – 15:00	**Ճաշի ընդմիջում**	
15:00 – 15:45	**ՆԻUS 3 – շարունակություն**	- Համայնքի մակարդակում էներգետիկ տվյալների հավաքում - Շենքերի դասակարգում - Կատարողականի առանցքային ցուցանիշները (էներգիա, շրջակա միջավայր, ծախս) - Տվյալների մշտադիտարկում և գնահատում - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
15:45 – 16:30	**Ամփոփում, ազատ քննարկում**	
18:00 – 19:00	**Ընթրիք**	

Օր 2՝ Երեքշաբթի, 26 հոկտեմբերի 2021թ՝

Ժամ	Դասախոսություն	Բովանդակություն
9:00 – 9:45	**Նախաճաշ**	
10:00 – 10:45	**ՆԻUS 4** **Էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգը և էներգետիկ կառավարման համակարգի գործիքների օրինակներ**	- ԵՏՀ երկրներում առկա լավագույն փորձը - ԷԿՏՀ-ը՝ երկրի և տեղական մակարդակում - Համայնքային էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգի մշակում - Տվյալների հավաքման գործընթացի կազմակերպում և տվյալների աղբյուրների սահմանում - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
10:45 – 11:30	**ՆԻUS 4 – շարունակություն**	- Մեծ քանակությամբ տվյալների վերլուծություն (մեծ տվյալներ(bigdata), բազմաչափանիշային և այլն) - Էներգետիկ մշտադիտարկում/չափողականություն և հաշվետայնություն - Հայկական ԷԿՏՀ-ի մշակման առաջարկություններ - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
11:30 – 11:45	**Սուրճի ընդմիջում (և հյուրանոցի սենյակների հանձնում)**	
11:45 – 12:30	**ՆԻUS 5** **Շենքերում էներգետիկ աուդիտների ընթացակարգը և բազմաչափանիշային վերլուծությունը**	- Շենքերի էներգետիկ աուդիտ - Էներգետիկ աուդիտի հիմնարար սկզբունքներն ու ընթացակարգերը - Շենքերում առկա տեխնիկական համակարգերը (առաջարկ, պահանջարկ) - Տվյալների հավաքում և ելակետային մակարդակի սահմանում - Էներգասպառման հաշվառում - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
12:30 – 13:15	**ՆԻUS 5 – շարունակություն**	- Էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ - Էներգաարդյունավետությանն ուղղված արդիականացման միջոցառումներ (էներգիայի, ֆինանսական միջոցների և ջերմոցային գազերի արտանետումների կրճատում) - Բազմաչափանիշային վերլուծություն և էներգաարդյունավետությանն ուղղված արդիականացման համար հարմար շենքերի ընտրություն - Շենքի արդիականացում - Էներգախնայողության հաշվարկ (ET կորեր, Կուտակային հանրագումարի (CUSUM) գծապատկերներ) - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)

13:15 – 14:15	**Ճաշի ընդմիջում**	
14:15 – 15:00	**ՆԻՍ 6** **Շենքերում էներգաարդյունավետության միջոցառումների համար ֆինանսավորման հնարավորությունների իրացման լավագույն աշխատակարգերը**	- Ներդրումային ծրագրերի հիմնարար տնտեսագիտական գնահատում (զուտ բերված արժեք (ԶԲԱ), ներքին շահութաբերության նորմ (ՆՇՆ) և այլն) - Ինչպե՞ս կարելի է ֆինանսավորել շենքի արդիականացնումը: - Սոցիալական հայեցակերպեր (կարողությունների զարգացում, իրազեկության մակարդակի բարձրացում) - Հարց ու պատասխան (պ՝ Մատիյա Վայդիչ)
15:00 – 15:00	**Ամփոփում և օրվա ավարտ**	ՄԱԿ ԵՏՀ, ՄԱԶԾ
16:00	**Տեղափոխում Երևան**	

Subject **SAVE THE DATES_UNECE-UNDP training_25-26 Oct 2021**

From Gohar Harutyunyan <gohar.harutyunyan@undp.org>

Cc Diana Harutunyan <diana.harutunyan@undp.org>, Vahram Jalalyan <vahram.jalalyan@undp.org>, Tigran Sekoyan <tigran.sekoyan@nature.am>, Artur Tsughunyan <arturtsughunyan@gmail.com>

Date 2021-10-19 12:34

- Agenda_UNECE-UNDP_MEM,EMIS,MRV training_ARM.docx (549 KB)